ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի փորձագիտական եզրակացությունը

Ընդդեմ «Ա ԹիՎի» հեռուստաընկերության «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի «Գուրգուրող կտտանքներ» խորագրով հաղորդման՝ «Աուդիո-վիզուալ լրագրողների» ասոցիացիայի նախագահ Արզուման Հարությունյանի դիմումի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Արամ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Լևոն ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Էմանուիլ ՄԿՐՏՉՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Օլգա ՍԱՖԱՐՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Դիտորդ մարմնին էր դիմել **«Աուդիո-վիզուալ լրագրողների ասոցիացիայի» նախագահ Արզուման Հարությունյանը**՝ ընդդեմ «Ա ԹիՎի» հեռուստաընկերության «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի: Դիմումը վերաբերում է 2013 թվականի դեկտեմբերի 9-ին այդ հաղորդաշարով հեռարձակված «Գուրգուրող կտտանքներ» խորագրով հաղորդմանը:

Դիտորդ մարմինը համարում է, որ **«Աուդիո-վիզուալ լրագրողների ասոցիացիան»** տվյալ գործով պատշաճ դիմող է, քանի որ զբաղվում է թրաֆիքինգի վերաբերյալ հրապարակումների էթիկական սկզբունքներով եւ աշխատանքներ է տանում այդ սկզբունքները լրատվամիջոցներում արմատավորելու ուղղությամբ:

2014 թվականի հունվարի 25-ին Դիտորդ մարմինն իր «ակվարիումային» նիստում քննարկեց վերոնշյալ բողոքը եւ առաջնորդվելով իր աշխատակարգի 5.1 հոդվածով, ըստ որի՝ «ԴՄ-ը ինքնակարգավորման նախաձեռնության անդամների կողմից կամ սույն աշխատակարգով նախատեսված դեպքերում՝ ոչ անդամների կողմից Վարքականոնի խախտման վերաբերյալ բողոքների քննության հիմքով կայացնում է կարծիք-եզրակացություն», ինչպես նաեւ՝ աշխատակարգի 5.8 եւ 5.9 կետերով, եկավ հետեւյալ եզրահանգմանը.

1. Մարդու անձնական կյանքին չմիջամտելը լրագրողական էթիկայի կարեւորագույն սկզբունքներից է: Այն արձանագրված է նաեւ Հայաստանի ԶԼՄ-ների ներկայացուցիչների Վարքականոնի 4-րդ բաժնում: Վարքականոնի 4.1 կետում նշված է՝ **«Հարգել եւ պաշտպանել մարդկանց անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը. հասարակական անհրաժեշտությամբ կարող է արդարացվել միայն պաշտոնատար անձանց, հասարակական**

գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին միջամտությունը»: Դիտորդ մարմինն արձանագրում է, որ տվյալ հաղորդման մեջ մարդկանց անձնական կյանքին միջամտությունը արդարացված չէր որեւէ հասարակական անհրաժեշտությամբ, հաղորդմանը հրավիրվածները հանրային դեմքեր կամ հանրային ուշադրության ձգտող անձինք չէին:

2. ԶԼՄ-ների ներկայացուցիչների Վարքականոնի 4.3 կետում նշված է՝ **«Առանձնապես նրբանկատ լինել, երբ տեղեկատվության աղբյուրները կամ հրապարակումների հերոսները երեխաներ, անչափահասներ են: Զգույշ լինել դեռահաս ամբաստանյալների, ինչպես նաեւ սեռական հանցագործությունների զոհերի, ինքնասպանություն գործած անձանց ինքնությունը բացահայտելիս»**: Դիտորդ մարմինն արձանագրում է, որ երեխաների ներկայությունը տվյալ հաղորդման մեջ, ինչպես նաեւ նրանց տրված հարցերը, այդ հարցերին անպայման ցանկալի պատասխան ստանալու միտումը, հաղորդման ժամանակ օգտագործվող բառապաշարը հակասում են Վարքականոնի 4.3 կետի առաջին նախադասության պահանջներին: Հաղորդման մեջ երեխաները ստիպված էին լսել իրենց ծնողների մասին ոչ բարենպաստ կարծիքներ, ինչը նույնպես անչափահասների նկատմամբ աննրբանկատ վերաբերմունքի դրսեւորում է: Բացի այդ, հաղորդման ընթացքում բացահայտվում է սեռական հանցագործության (թրաֆիքինգի) զոհի ինքնությունը, վերջինս հրապարակային վիրավորանքների է արժանանում, ինչը նույնպես հակասում է Վարքականի 4,3 կետին:

3. Դիտորդ մարմնի կարծիքով, տվյալ հաղորդման մեջ անտեսված էին նաեւ «Երեխաներին վերաբերող նյութերի մասին ՅՈՒՆԻՍԵՖ-ի սկզբունքները» (երեխաների մասին ռեպորտաժների՝ ՅՈՒՆԻՍԵՖԻ մեդիախմբի մշակած էթիկական սկզբունքներ) փաստաթղթի պահանջները, մասնավորապես դրա երկրորդ՝ «Երեխաների հետ հարցազրույցներ վարելու սկզբունքների» 1-ին կետը. **«Մի վնասեք երեխային. խուսափեք այնպիսի հարցերից, արտահայտություններից եւ մեկնաբանություններից, որոնք ... երեխային ենթարկում են վտանգի կամ նվաստացման, ստիպում են երեխային կրկին վերապրելու ծանր դեպքերի ցավն ու տառապանքը»:**

4. ԶԼՄ-ների ներկայացուցիչների Վարքականոնի 4.4 կետում նշված է՝ **«Ողբերգություն կամ վիշտ տարած մարդկանց մասին տեղեկություններ հավաքելիս, հարցազրույց կամ լուսանկար հրապարակելիս, տեսա կամ ձայնանյութ հեռարձակելիս նրբանկատ լինել նրանց նկատմամբ»:** Դիտորդ մարմինն արձանագրում է, որ տվյալ դեպքում նրբանկատության սկզբունքը պաշտպանված չէր, եւ ըստ էության չարաշահվում էին երեխաների միամտությունը, երեխաների եւ մյուս մասնակիցների՝

լրատվամիջոցների հետ շփվելու անփորձությունը:

5. Դիտորդ մարմինը հիշեցնում է նաեւ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2003 թվականի «Լրատվամիջոցներով քրեական դատավարությունների մասին տեղեկատվություն հաղորդելու վերաբերյալ» Rec (2003)13 հանձնարարականի հավելվածի 8-րդ սկզբունքը, որում ասված է. **«Կասկածյալների, մեղադրյալների, դատապարտվածների կամ քրեական գործի կողմ հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկատվության մատուցումը պետք է կատարվի Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված՝ մասնավոր կյանքի պաշտպանության նկատմամբ հարգանքի դրսեւորմամբ: Հատուկ պաշտպանվածություն պետք է տրամադրվի անչափահասներին, կամ այլ խոցելի անձանց, ինչպես նաեւ տուժողներին, վկաներին եւ կասկածյալների, մեղադրյալների ու դատապարտվածների ընտանիքներին: Բոլոր գործերում պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն վտանգավոր հետեւանքներին, որոնց կարող են ենթարկվել այս սկզբունքում հիշատակված անձինք՝ տեղեկատվության բացահայտման հետեւանքով իրենց ինքնության հրապարակայնացման դեպքում»:**

Ելնելով վերոշարադրյալից, Դիտորդ մարմինն արձանագրում է, որ տվյալ հաղորդման մեջ նախապատվությունը տալով նման թեմաների նկատմամբ լսարանի հետաքրքրասիրությանը, հեռուստաընկերությունը անտեսել էր քաղաքացիների՝ իրենց անձնական կյանքին չմիջամտելու իրավունքը, չարաշահել էր երեխաների եւ լրատվամիջոցների հետ շփումների փորձ չունեցող անձանց դյուրահավատությունը եւ վստահությունը:

Եզրակացության վերջնական տեքստն ընդունվել է Զանգվածային լրատվության միջոցների էթիկայի Դիտորդ մարմնի 2015 թվականի մարտի 19-ի նիստում, ԴՄ հետեւյալ կազմով՝

Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, «Անալիտիկոն» հանդեսի գլխավոր խմբագիր

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ, «A1+» հեռուստաընկերության տնօրեն

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երեւանի մամուլի ակումբի նախագահ

Օլգա ՍԱՖԱՐՅԱՆ, իրավաբան

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 48-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է ԶԼՄ-ների ներկայացուցիչների էթիկայի Վարքականոնով, որն ընդունվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2007 թվականի մարտի 10-ի ժողովում: